

սակէտին, ես կարծում եմ թէ ի նկատի առնելով մինչեւ հիմայ կատարուած լեզուագիտական եւ ազգագրական քննութիւնները, կարելի է հետեւեալ եզրակացութիւններին յանգել, իբրեւ ամէնից աւելի հաւանականը:

Ա. Նայիրիի (Եփրատ գետի հովիտում) բնակուած այն ցեղերն, որոնք յիշուած են ասորեստանեան սեպագիր արձանագրութիւնների մէջ, ո՛չ սեմական եւ ո՛չ արիական ժողովուրդներ են, այլ կովկասեան:

Բ. Հայերը հնդեւրոպական, արիական ծագում ունին, գաղթած են ուրիշ արիական ցեղերի հետ Մակեդոնիայից. անցել են Վոսփորը (Բոսֆորը) տեղաւորուել են նախ Փոնտիայում, Կապադովկիայում եւ ապա կամաց կամաց յառաջանալով դէպի արեւելք զրաւել են Խալդէերի երկիրն, որոնք արդէն ուժասպառ էին եղած գրեթէ մարերի յարձակումից: Նրանք անշուշտ առանձին չէին այս արշաւանքի մէջ. նրանց ընկերացել են մասնաւորապէս կիմմերներն, որոնք նոյնպէս արիական-թրակիական (մակեդոնական) ծածուկից էին: Արմէններն Վանը եւ լճի շրջակայքը զրաւելով հետզհետէ ընդարձակել են իրենց երկիրն եւ ստեղծել են պատմական Հայաստանը:

Գ. Վանի սեպագիրների հեղինակ խալդէերը նախնիքն են մի կողմից ալարոզների (Անդրկովկասի հարաւում), միւս կողմից լապերի (Սեւ ծովի եզերքի վրայ): Իսկ այս երկու ցեղերն էլ խառնուած են կամ պատկանում են քարթլեթեան ցեղախումբին, որի գլխաւոր կամ հական մասն են վրացիք:

Հետեւաբար՝

Դ. Հայ եւ վրացի ժողովուրդների առաջին յարաբերութիւնները տեղի են ունեցել 2. դարում (Ն. Բ.) երբ արմէնները ընդհարուել են խալդէերի հետ Վանի շրջակայքում եւ նրանց երկիրը զրաւելով իրենք են հաստատուել այնտեղ:

Անցնինք այժմ յատկապէս քարթլեթեան ցեղախումբին:

(Շարունակելի:)

ՍԱՐՈՒԽԱՆ



### ՆԵՐՈՆ ԿԵՅՍԵՐ ԸՐԵԻԵԼԵՆ ՔՈՂՈՔԸ-ԿԵՆՈՒԹԻՒՆԸ

ՊՐ. ՎԵՌՆԷՐ ՉՈՒՐ

(Շարունակուելի:)

2. Արեւելեան Իրանի քաղաքական յարաբերութիւնները առաջին դարում:

Արեւելեան Իրանի քաղաքական յարաբերութիւններու վրայ մեր ծանօթութիւններու ազդելը կը կազմեն զրաւանութեան մէջ ցրուած քանի մը տեղեկութիւններ եւ անոր իշխաններու զբաղմունքն անոնք, որոնք կրնան այս շրջանին մէջ զետեղուիլ: Մեր քննութեան մեկնակէտը պիտի ըլլայ երկիրն այն կարգը, զոր Իսիդոր Խարաքսացի՝ հնագոյն արշակունեան հարստութեան կործանման յաջորդող անմիջական շրջանէն պահած է մեզի<sup>28</sup>:

Իսիդոր Աւգոստոս կայսեր կողմանէ հեռուոր արեւելք զրկուեցաւ, որպէս զի աշխարհագրական հետախուզումներով Կ. Կեսարի, որ Բ. յստաջ 1ին արեւելք մեկնած էր, ուղիւն զործողութիւնները նախապատրաստէ<sup>29</sup>: Այդ միջոցին Մարգիանս ուսարսը Տիգրոնի պետութեան հիւսիսարեւելեան սահմանազաւառը կը կազմէր: Ապաւարկտիկէ կամ Ապաւորտենէ տափաստանը, Ոքսոսի եւ Պարսիսաթրաս լեռնաշղթային միջեւ, հաղորդակցութեան միջնորդն էր դէպի պարթեւ-վրկանեան միջնորդաւանները: Մարգիանսյէ հարաւ դանուով երկիրները, Արէա, Դրագիանա, Շակաստան եւ Արաքոսիա, որ պարթեւ ազգի թագաւորներու տակ ժամանակ մը անկախ պետութիւն եղած էին<sup>30</sup>, այս միջոցին զարձեւալ հպատակ էին արքայից արքային: Արեւելեան եւ արեւմտեան նահանգներէն շրջապատուած էր Պարսից թագաւորութիւնը, որ թէեւ պարսիկ բնիկ դաւառներու՝ հին Պարսք եւ Կրման սատրապութիւններու մէջ, Տիգրոնէ կերպապէս կախում ունէր, սակայն իրականին կատարեալ անկախութիւն մը կը վայելէր (Գուտալիդ, 156): Այսպէս ամբողջ ա-

<sup>28</sup> GGM. I, 244 յ. 4.  
<sup>29</sup> Պլին. Գ. 141. Կ. Միւլէր հետեւելով Բեռնարդիէ հոս կրաւամբ Դիոնիսիոս անուան տեղ Իսիդոր նշանակած է (էջ 2Ա յ. 4):  
<sup>30</sup> Ասիկէ ծագում առած հնդկա-պարթեւական պետութեան մասին տես վարը:

րեւելեան Իրանը, բաց առնելով միայն բակարիական-զոգտանեան երկրամասերը, որոնք Թոխարացիներու ձեռքն էին, հարստութեան վերջին շրջանին, զարձեւալ արքայից արքային կը պատկանէր:

Իսիդորի գործունէութիւնը կ'իյնայ այն արիւնալի խառնաշփոթութիւններու սկիզբը, որոնք պատճառ եղան պետութեան քայքայման եւ նոր հարստութեան մը տակ անոր վերականգնումին: Մաննէսի տնէն վերջին երկու արշակունիները՝ Հրահատ Գ. եւ անոր կրտսերազոյն որդին Հրահատակէս՝ նոյն իսկ արեւելքի համբերող ժողովուրդներու համար անտանելի էին: Անոնց բռնակարական կամայականութիւններու դէմ ծագած դժգոհութիւնը՝ պետութիւնը ծանր կռիւներու մէջ խորասուզեց, որոնք 5 մինչեւ 15 տարիներու միջոցին Իրանի պատմութիւնն անթափանցելի մշուշով մը կը պատեն: Հազիւ այս մթութիւնը կը փարատի, պետութեան ղեկը կը տաննէք նոր արքայից արքայի մը՝ Արտաւանի ձեռքը, որ Հրահատ Գ.ի Հոռմէացիներէ գահ բարձրացած որդին կը վտարէ: Հոռմի գահաժառանգը՝ Գերմանիկոս 18 տարեոյն արեւելքի նոր տիրոջ հետ համաձայնութիւն մը կը կնքէ, որով Հոռմի եւ Տիգրոնի յարաբերութիւնները տասնեակ մը տարիներու համար խաղաղ ընթացք մը կը ստանան (Տակ. Տ. Բ. 1 յ. 2):

Արտաւան միայն մօք կողմանէ արշակունի էր, իսկ հօր կողմանէ ոչ համաձին եւ մեծցած էր Դակերու մօտ (Տակ. Տ. 2, 41, 42, Բ. 3): Վրկանի եւ Կրմանի ազնուականներու մէջ ունէր իր խմբակը, որ անյեղլի հաւատարմութեամբ իրեն կուսակից էր (Տակ. Տ. 2, 36): Տակիտոսի վկայութեամբ (Բ, 3) իր դակեան յարաբերութիւններու շնորհիւ 15ին գահ բարձրացաւ, իսկ 36ին իր Վրկան-կրմանեան հաւատարմիները՝ գահի կորուստէն յետոյ իր փախուստի ճանապարհը հարթեցին (Տակ. Տ. 2, 44): Իւր որդիները Վարդան եւ Գոտարզ ալ իրենց ուժերով հիւսիսարեւելեան նահանգներու մէջ արմատացած էին: Գոտարզ անոնց օգնութեամբ Վարդանի նորածագ ապստամբութեան դէմ յաջողութեամբ կը մարանչի եւ երբ վերջապէս կը ստիպուի արքայից արքայի թագը թողուլ իր եղբոր, կը պահէ իրեն Վրկանի իշխանու-

թիւնը (Տակ. Տ. ԺԱ, 8, 9)<sup>31</sup>: Իսկ Վարդան համանման դէպքեր մը պարագային կ'պատանի հեռաւոր արեւելք՝ տոխարեան Բակարիայի սահմաններու մօտ (անդ, ԺԱ, 8): Ըստ այսմ Արտաւանի կառավարութեան սկզբէն մինչեւ Գոտարզի մահը՝ կէս դարու միջոցին, արքունի ուժին ծանրակէտը Վրկանեան երկիրներու եւ անոնց սկիւթական անդրաշխարհին մէջ հաստատուած էր: Այս յարաբերութիւններէն՝ Արտաւանի համար կարելի է այն եզրակացութեան գալ թէ սա զաւակն էր արշակունի մօր մը եւ սկիւթական իշխանի մը, որ հին պետութեան քայքայումին՝ նախ Վրկաններու երկրին եւ ապա արեւմուտքին ալ տիրացած է:

Այս ըմբռման դէմ Յ. Մարքուարտ (ZDMG, ԾԸ, 640 յ. 2) հետեւեալ նոր կարծիքը կը դնէ. Արտաւան Ատրպատականի մարական արքունի տնէն կը սերի եւ յանձին Արտաւանի այս ցեղը պարթեւական գահին տիրացած է: Իր յենակէտն է Քէյ-Սոսրովի իրանեան ղիւցազնավէպը, որու համաձայն սա Ատրպատականի արքային որդին էր եւ դեռ մանուկ հասակին անդրկասպեան անապատի թուրքմէններու քով կը փախցուի, իսկ իր նախահայրերու գահին վրայ հաստատուելը կը պարտի Սորասանի Գոտարզ թագաւորին (անդ, 642): Դարձեալ Ստրաբոն (ԺԱ. 523) կը պատմէ, թէ Ատրպատականի արքունի ցեղը, Մոսիքի, Հայաստանի եւ Պարթեւներու թագաւորներու հետ ազգակցական կապեր հաստատելէ ետքը դեռ կը տեւէր: Եւ վերջապէս Յովսեփոս (Հն. ԺԸ, 48 յ. 2) կ'աւանդէ, թէ Արտաւան Մարաստանի թագաւոր էր, երբ մեծ արքային գահը հրաւիրուեցաւ:

Սակայն առաջ բերուած փաստերը այդ կառուցուածքին չեն տուար: Իրանեան ղիւցազնավէպը շատ մը ուրիշ գծերու կից Վարդաի կեանքէն գծեր ալ Քէյ-Սոսրովի պատկերին մէջ ներմուծած է (Մարքուարտ, Անդ, 642) եւ որովհետեւ Վարդա Ստրպատականի թագաւորին որդին էր, շատ հաւանական է, որ աւանդավէպի ղիւցազնին երիտասարդութեան պատմութիւնն՝ առաջին դարու երկու-

<sup>31</sup> Գոտարզ, ինչպէս իր զբաղմունքն, որոնց ընթերցումը ի սկզբան սխալ կարգացուած էր, կ'պացուցանեն, Արտաւանի հարազատ որդին էր. տես Steinh PWRE, VII, 1676, յոդ. Gotarzes րոտ Mrothi, Num. Chron., 1900, 93 յ. 2, Catalogue XLV, 2:

բաջ մեծ-արքաներուն կեանքի դէպքերուն խառնուրդ մը կազմէ: Իսկ Ստրաբոն կը հաւաստէ միայն թէ արքունի ցեղը զեռ կը տեւէ, բայց ոչ թէ զեռ կ'իշխէ: Այս ցեղին վերջին ծանօթ անդամն է Արիօբարզան, զոր Կ. Կեսար Հայաստանի թագաւոր կարգած է քրիստոնէական թուականէն տարի մը յառաջ<sup>32</sup>: Արիօբարզանի վաղահաս մահէն ետքը հայերն անոր որդիներն արտաքսած են (Տակ. Տ. Բ, 4. ԾԵ, 10 ա, 7), որոնք հաւանաբար Ստրաբոնի գրութեան ժամանակ Հռոմ աքսորքի մէջ կ'ապրէին: Այսպէս այս տեղիքն ալ առանց Արտաւանի իր մեկնութիւնը կը դառնէ:

Ի վերջոյ այս խնդրոյն համար Յովսէփոս լիարժէք վկայ մը չէ: Նոյն առթիւ եւ աղերսով կը հաւաստէ, թէ Արտաւան իր Որոնդէս որդին՝ Վոնոնի արտաքսումէն ետքը, 16ին Հայաստանի թագաւոր կարգած է (ԺԸ, 52) եւ Տայրէքը կարծած է այս վկայութեան գրամադիտական փաստ մը գտած ըլլալ<sup>33</sup>: Սակայն Որոնդէս՝ իր երկցազոյն եղբոր Արշակի մահէն յետոյ միայն՝ 35ին Հայաստան անցած է<sup>34</sup>. Եւ բոլորովին անհաւանական է, որ հայրը զինքը երկցազոյն եղբորմէն նախադասած ըլլայ. դարձեալ կարելի չէ ընդունիլ թէ Արտաւան 15ին արդէն երկու չափահաս գաւազ ունեցած ըլլայ: Ուստի Յովսէփոսի տեղեկութիւնը ստիպուած ենք մերժել եւ զբանտներուն համար ուրիշ մեկնութիւն մը որոնել<sup>35</sup>: Եւ այսու արդէն կասկածելի կը դառնայ Արտաւանի Ատրպատականի վրայ թագաւորելը: Յովսէփոս զուրս ձգած է Գոտարզի յաջորդը՝ Վոնոն արքայից արքան, որ իրապէս Ատրպատականէ գահ բարձրացած է (Տակ. Տ. ԺԲ, 14) եւ Արտաւանի յիշեալ որդւոյն յաջորդ կը նշանակէ անոր Վաղարշ եղբայրը (Հն. Ի, 74): Տայրէքը փորձած է, այս անտեսումը մեկնել Յովսէփոսի աղբիւրէն, որ պարթեւ թագաւորներու ծանօթագրուած ցանկ մը կը գտնուի: Յովսէփոս սխալմամբ

<sup>32</sup> Mon. Anc., 6, 28: Տակ. Տար. Բ, 4: Գիոն. ԾԵ, 10 ա, 7:  
<sup>33</sup> Parthernachrichten, 12 յջ.: Խնդիրն երկու ցուած եւ ոչ պատկեր ունին եւ Հոկտեմբեր 15ին ու Փետրուար 16ին — ըստ Ռիպլինգի պետութեան սահմաններէն զուրս կոխուած են:  
<sup>34</sup> Տակ. Տ. 2, 33: Յովս. Հն. ԺԸ, 98, վերջինս առանց անուան յիշատակութեան:  
<sup>35</sup> Արդեօք Ատրպատականի Որոնդէս իշխանութեան սկիզբներէն են:

անտեսած է Վոնոնի թագաւորութիւնը, որ 51 տարւոյն մէջ կ'ամփոփուէր լիապէս եւ այս պատճառաւ միայն ծանօթագրութեան մէջ կը յիշուէր: Ուստի տրամաբանական հետեւութեամբ Տայրէքը ազգակցական կապը կը վերագրէ Վոնոնի եւ զայն Գոտարզի եղբայրը կ'ընէ (26, 28): Սակայն այս ճամբան անել է. Վոնոն 51ին արդէն յառաջացած տարիքի մէջ ըլլալու էր, իսկ իր որդին Վաղարշ այր կատարեալ էր եւ տարեկից Գոտարզի եւ Վարդանի, որ 45ին իր ուժին բարձրակէտին վրայ սպանուեցաւ (Տակ. Տ. ԺԱ, 10): Ուստի Վոնոն երկցազոյն սերունդի մը կը պատկանէր եւ ըստ տիրող կարծիքին, Արտաւանի միայն եղբայրը կրնայ համարուիլ (Worth, cat. 178 յջ.): Յովսէփոսի աղբիւրն երկու եղբայրները մէկ անձի վերածած է, նոյնը տեղի ունեցած է նաեւ զիւցազոյնի մէջ. Արտաւան եւ Վաղարշ երկու արքաները Բէյ-Սոսրով ժողովրդական զիւցազոյն մէջ միաւորուած են: Այսպէս յանիրաւի վկարգուած է Արտաւանի, իր եղբոր Վոնոնի, թէ՛ Վաղարշի հայրութիւնը եւ թէ՛ Ատրպատականի թագաւորութիւնը:

Կը տեսնուի ուրեմն, թէ Արտաւանի ծագման մասին Տակիտոսի վրայ հիմնուելով՝ հանուած եղբակացութեան դէմ բերուած փաստերը տկար են եւ անհաստատ: Արտաւան եւ իւր որդիները Վրկանի մէջ արմատացած են, իսկ Վոնոն եւ իրեններն՝ Ատրպատականի մէջ: Երբ 51ին թագը կըրտսերագոյն գծին անցաւ, այն ստեն միայն իշխանութիւնը դարձեալ արեւմուտք փոխադրուեցաւ: Վոնոն 15ին հիւսիս-արեւմտեան փոքր տէրութեան թագաւորն եղած ըլլալու է, երբ Արտաւան հայ Վոնոնին հետ կոտորմէջ էր: Ամբողջ իր երեսնամեայ եւ աւելի երկարատեւ կառավարութեան միջոցին Արտաւան իր տնօրէն արեւմուտքի մէջ արմատացած էր եւ ընտելացած անոր մեղմագոյն քաղաքակրթութեան: Երբ 51ին Վոնոն եւ անոր վաղահաս մահէն ետքը նոյն տարին իսկ՝ անոր որդին Վաղարշ պարթեւական թագին տիրացաւ (Տայրէքը, 20 յջ.), պետութեան ծանրակէտը կրկին հին իրանեան մշակոյթի արեւմտեան երկիրները տեղափոխութեան հանդէպ անտարբեր չմնաց. այս նոր ուղղութեան հետեւութիւնն եղաւ, Պարսաստրապի կից, մինչ այն արքունի եր-

կիրներուն ապստամբութիւնը եւ Վրկանի ինքնավար պետութեան կազմութիւնը:

Արդէն 55ին թագապահանջ մը գլուխ բարձրացուց նոր արքային դէմ (Տակ. Տ. ԺԳ, 79): Ունինք անոր զբանտները նոյն տարւոյն Դեկտեմբերէն մինչեւ 58ի Յուլիոսը (Վրոթ, 180): Թէ արքայն կրցած ըլլայ զըսպել զայն, այդ չաւանդուիլ մեղի, բայց արդէն 57ի համար կը պատմուի Վրկան ծանր ապստամբութիւն մը, որ արգելք հանդիսացած է արքայից արքային՝ Հռոմի դէմ՝ հայ գահին վրայ թագաւորող իր եղբոր օգնութեան հասնելու (Տակ. Տ. ԺԵ, 24 եւ վերջ Գլ. Ա, յօդ. 2):

Հազիւ կարելի է տարակոյսի ենթարկել այս տարիներու ապստամբական երկու կարեւոր շարժումներուն իրարու հետ ունեցած աղերսը: Մանաւանդ թէ Տակիտոսի մէկ տեղիքը անոնց նոյնացումին կը դրդէ զմեզ: Տակիտոս թագապահանջը, որուն երեւան գալով 55ին Վաղարշ ստիպուած եղաւ Հայաստանը պարսկելու, Vardanis regis filium, Վարդան թագաւորին մէկ որդին կ'անուանէ: Գրեթէ ընդհանրապէս Vardanis անունն ուղղական ըմբռնուած եւ ստով Վարդան անունով Վաղարշի ապստամբ որդի մը կեանք առած է<sup>36</sup>: Սակայն մեղի հասած ընթերցուածն ունի սքանչելի իմաստ մը. Արտաւանի մէկ թոռը, անուշտ Վրկանի մէջ հաստատուած արքունի գծին ապօրինի մէկ ծնունդը, ոսոխ կանգնած է Վաղարշի ճիշդ այն տարիներուն, երբ սա Վրկանի ապստամբութեան պատճառաւ մեծ նեղութեան մէջ էր: Վարդանի այս որդին ապահովաբար ապստամբ Վրկաններու թագաւորն է<sup>37</sup>: Հիւսիս-արեւելքի նախկին արքայադիրները զինքը 55ին մոռացութենէ կորցած են եւ արեւմուտքի անհաճոյ արքայից արքային դէմ բարձրացուցած<sup>38</sup>:

Ուրեմն՝ 55է մինչեւ 60՝ ներքին ծանր կռիւները մղուած են ժառանգական իրաւունքով գահի կոչուած նոր գծին կողմանէ

<sup>36</sup> Տակ. Տ. ԺԳ, 7, հրատարակչներէն սրբազրուած: Ասոր հակառակ ունի Գուտարի 130, ուղիւ ընթացէ մը առաջնորդուած:  
<sup>37</sup> Եթէ Տակիտոս երկու շարժումներուն նոյնութիւնը չէ ճանչցած, այն ստեն արեւելեան դէպքերու համար երկու զանազան աղբիւրներ դորձածած է. տես Klio, ԺԹ:  
<sup>38</sup> Թէ այսպիսի իշխանազուններ դեռ կային, կ'ապացուցանէ 55ին Վաղարշի կողմէ անոնց Հռոմի պատանդ տրուելը (Տակ. Տ. ԺԳ, 9):

այն տարրներուն դէմ, որոնք նախապէս մարդկային կեանքի մը տեւողութեամբ տիրած էին պետութեան վրայ: Կիսով չափ յունացած Վաղարշի քաջութիւնը՝ միացած արեւելեան Իրանի կարգ մը դէպքերու հետ՝ արեւմուտքին հնարաւորութիւն տուած է այս անգամ արեւելքէն եկող թագաւորն ետ մղելու: Սակայն 60ին Հռոմի միջամտութիւնը պետութեան երկուքի՝ պարթեւ եւ Վրկան տէրութիւններու՝ տեւական բաժանումը յառաջ բերած է:

Ներքին օրով՝ Արտաւանի ապստամբութեան Վրկանեան առանձին պետութեան մը կազմութեան առաջնորդող՝ պատմական յեղաշրջման միտքն հասկնալէ յետոյ, հարց կը ծագի, թէ ի՞նչ էր տարածութիւնը Վրկան իշխանութեան, որմէ սկզբնաւորած է այս զարգացումը: Արտաւանի տոհմային իշխանութիւնը կը տարածուէր Վրկանի եւ Կրմանի վրայ (Տակ. Տ. 2, 36). Վրկանով կը նշանակուի հոս հիւսիսային լեռնազաւառին բերրի երկիրը, իսկ Կրման անունն է անկէ հարաւ բարձրաւանդակի անապատին: Տակիտոս այս անուամբ կը նշանակէ հոս՝ երբեմն Պարթեւաստանի վերաբերող Նոր-Կրմանը եւ ոչ թէ հին Կրմանն իր պարսկական բնակչութեամբ: Ուստի Արտաւանի տոհմային իշխանութիւնը կը պարփակէր իր մէջ Արշակունիներու հին պարթեւ-վրկանեան բնազաւառը. այս գաւառին պարսիկներէ տիրապետուած մասերուն յետոյ գրաւումը բարձրացուցած է նոր իշխանին ազգային ճոխութիւնը:

Արտաւանի իշխանութեան զարգացման պատկերն այսպէս կրնանք ստուերագծել: Իւր պետութեան հիմը դրած է Պարսաստրապի մէջ եւ շուրջը զտնուող երկիրներուն՝ Վրկանի Աստաւենէի եւ Նիսայայի մէջ: Ասկէ մղած է պարսկական մարտը, որով տիրացած է Կրմանի նախապէս պարթեւական մասին: Յետոյ հպատակեցուցած է արեւմուտքը եւ իր Վոնոն եղբայրը թագաւոր կարգած է Ատրպատականի: Հռոմէացիներու հետ առաջին բախումէն ետքը հարաւ-արեւելքի մէջ զբաւած է Արէան, ուր հնդիկ-պարթեւական Գոնտոփար թագաւորը զինքը զեռ չէր կանխած:

Եթէ՛ Վրկանեան տոհմիկ իշխանութեան մը վրայ հիմնուած, հիւսիս-արեւմտեան իրանեան մեծ պետութեան մը կազմութիւնը

10էն 15 տարիներու շրջանին տեղի ունեցած է, սակայն ճիշդ նոյն տարիներուն մէջ երկրորդ պարթեւական մեծ տէրութիւն մը կերպարանաւորուած է հիւսիս-արեւելեան Հնդկաստանի եւ հարաւ-արեւելեան Իրանի մէջ: Շակերու արշաւանքի ընթացքին արդէն (Ք. առաջ 127ին) հարաւ-արեւելեան գաւառներու մէջ՝ պարթեւ թագաւորներու տակ՝ պետութիւն մը կազմուած էր: Այս պետութեան պատմութիւնը մեր միակ աղբիւրներէն՝ անոր թագաւորներու դրամներէն, պայծառօրէն երեւան հանած է V. A. Smith (ZDMG, 10, 49 յջ.):

Ծանօթ են մեզի կարգ մը, մեծաւ մասամբ ոչ-արշակունի անուններով, պարթեւ թագաւորներ, որոնց առաջին ներկայացուցիչները՝ դատելով դրամներու գանուած վայրերէն, իշխած պէտք են ըլլալ Արաքոսիայի եւ Շակաստանի մէջ: Այս երկիրներու մէջ կարգը յանկարծ կը խզի, բայց իր ճշգրտագոյն շարունակութիւնն ունինք Տաքսիլայի հիւսիս-արեւմտեան պետութեան մէջ (Smith, 52 յջ.): Երկարատեւ իշխողներու շարքէ մը ետքը հոս երեւան կ'ըլլէ Գոնտոփար թագաւորն, որու դրամներուն կը հանդիպինք, հին Հնդիկ-պարթեւական պետութենէն դուրս՝ գրեթէ ամբողջ Պենջաբի եւ հարաւ-արեւելքի իրանեան բնագաւառներու՝ Արաքոսիայի եւ Շակաստանի մէջ: Ըստ այսմ սա, իբրեւ մեծ աշխարհակալ մը, Ինդոսի շրջանը միացնելով հարաւ-արեւելեան Իրանի հետ նոր ընդարձակ պետութիւն մը հիմնած է: Թէ Գոնտոփար իշխած է Արտաւանի եւ անոր որդիներու հետ միաժամանակ, այս հնդիկ ժամանակագրութեան հաստատուն կէտերէն մին է<sup>39</sup>: Մեր աղբիւրներուն համաձայն<sup>40</sup> Գոնտոփար 20—21ին իշխանութիւնը ձեռք առած է եւ 46—47ին դեռ կ'իշխէր:

Հիմնադրին մահէն անմիջապէս ետքը՝ Գոնտոփարի պետութիւնը քայքայած է, վասն զի Գոնտոփար անժառանգ մեռնելով (Otto, 191) ազգականները բաժնած են 50էն քիչ ետքը: Արեւելեան Իրանի բաժնին ժառանգորդը յաջորդ տարիներուն իր բաժինը մեծապէս ընդարձակած է ի վնաս պարթեւ պետութեան: Յայտնապէս կ'երեւայ թէ Գոնտո-

<sup>39</sup> Տես իր մասին W. Otto, PWRE, Թ. 183 յջ., յոգ. Hyndopherrés:  
<sup>40</sup> Տես Sallet, Nachf. Alex., 158. Oldenburg, Ztschr. f. Num., 2, 291. Smith, 65. Otto, 185 եւ Sébart, Notes d'épigr. ind., VIII, Série XV, 119:

փարի այս ժառանգը՝ Վրկանեան խռովութիւններէն օգտուելով՝ նուաճած է այն ամէն երկիրները, որոնք՝ արքայից արքային դէմ մղուած կռիւններով բաղմազրազ Վրկանները՝ չէին կրնար պահել. 55էն մինչեւ 60 տարիներուն՝ նախ գրաւած է Արէան եւ Գրանդիանան, յետոյ՝ Ոքսոսէն յառաջանալով՝ Պարսիստանի ձորը, իսկ ծովագաւառէն՝ Մարաստան տանող հարաւային պողոտային ուղիներուն իր իշխանութեան ծիրին մէջ աւանդ է: Ուրեմն Վրկան պետութիւնը պարթեւներու եւ Արէացիներու միջեւ գրեթէ ոչնչացած էր եւ կը սահմանափակուէր Կասպից ծովու եզերքին ու անոր հարաւէն սահմանակից հին Պարթեւաստանի արեւմտեան գաւառներուն մէջ, երբ հոռոմէական միջամբարութիւնը 60ին պարթեւական խաղաղութիւնը բերաւ եւ անոր հետեւութեամբ ազատութիւն գտաւ Արէացիներու դէմ ինք գինքն պաշտպանելու: Իրապէս ալ Տոխարացիներու եւ Վրկաններու ճնշման տակ՝ երկրով տարածուն, բայց ներքուստ տկար Արէայի պետութիւնը շուտով ընկճուեցաւ, եւ Վրկանները՝ հեղհեղէն ի վնաս անոր, դէպի արեւելք ընդարձակուեցան: Վրկանի պետութիւնը դէպի արեւելք իր այս տարածման ժամանակ ժառանգորդ կը հանդիսանայ Ներոնի դադափարներուն, որոնց վրայ ստորեւ պիտի խօսինք:

3. Վրկանի երթեւեկի ցամաքային ճան իր հարաւային կողմէն ցած նշանակութիւնը:

Վրկան պետութիւնը, երբ Հռոմի դաշնակցութիւնը կը խնդրէր, կը ներփակէր իր մէջ միայն Կասպից ծովու արեւելեան եզերքի երկիրը եւ էլբրուզէ հարաւ պարթեւական Կոմիսենէ եւ Սոարինէ գաւառները: Ասկէ դուրս Վրկանի թագաւորը պահանջ ունէր արեւելքի սահմանակից երկիրներու վրայ՝ մինչեւ տոխարեան սահմանը, եւ կը յուսով Հռոմի դաշնակցութեամբ դիւրաւ իրագործել իր այս փափագը: Սակայն որչափ ուժ Վրկան պետութիւնը տարածութեամբ սահմանափակ էր, իր երթեւեկային-քաղաքակազմի դիւրքը չէր տուժած. Իրանեան արեւելքի եւ արեւմուտքի հաղորդակցութեան ուղիներն իր ձեռքին մէջ էին: Անցման երկրի այս նկարագիրը Վրկանի համար նշանակալից եղած է:

Իրանեան բարձրագաւառի եզերալեռները միայն՝ բաւականին ջրարբի են բարձր մշակոյթով ժողովրդեան մը բնակավայր դառնալու համար: Միջին՝ ընդարձակ բարձրաւանդակը ցամաք է եւ միայն հոն մշակելի, ուր լեռներէն իջնող գետերն ու առուակները դեռ չեն անյայտացած: Այսպէս արեւելեան եւ արեւմտեան Իրանի միջեւ իրրեւ հաղորդակցութեան լայնանիստ արգելք մը տարածուած է Սուժաստանի անապատն, որ հնութեան մէջ Պարթեւաստանի եւ Կրմանի անապատ անունը կը կրէր: Միայն հիւսիսային կողմէն Սոարսանի լեռնաշղթան՝ շրջապատի բերրի գաւառներովը՝ հին Մարաստանը կը կապէ Հերատ գետի եզերքին ուղիներուն հովտին հետ (Գիսլինդ, 454 յջ.):

Հոս միայն հնարաւորութիւն կայ ցամաքի եռուն երթեւեկի մը պարթեւական արեւմուտքի եւ արեւելեան իրանեան մշակոյթի կենդրոններու եւ անկէ անդին հնդիկ եւ չին աշխարհներու միջեւ: Ասկէ ընթացած է Աղեքսանդրի ճամբան դէպի Բակտրիա եւ Հնդկաստան (Գիսլինդ, 484): Իսիդորի նկարագրած արքունի պողոտան Մարաստանէն՝ Կոմիսենէն եւ Սոարինէն կտրելով մինչեւ պարթեւական հարթադաշտը, Վրկանի լեռնագաւառէն անցնելով Ապաւորտինէն դէպի Մարդիանա ուղիսը եւ մինչեւ Բակտրիայի եւ Հնդկաստանի սահմանը կը հանէ: Աւելի հարաւէն՝ պարսկական լեռներու հիւսիս-արեւելեան ստորոտէն, անապատի ճամբայ մը Սոարինէի մէջէն ուղիղ Գրանդիանա կ'երթայ (Tab. Peut.): Ուրեմն ու՛ որ, ինչպէս Ներոնի օրով Վրկանի թագաւորը, այս երկրին եւ Սոարինէի կը տիրէր, կ'իշխէր կատարելապէս նաեւ պարթեւ արեւմուտքի եւ անդրասիական վաճառականութեան նշանաւոր միջակէտներուն միջեւ անհրաժեշտ ցամաքային երթեւեկին վրայ:

Հոռոմէական քաղաքականութեան համար Վրկանեան դաշնակցութիւնը մեծ կարեւորութիւն կը ստանար այս երթեւեկային նպաստաւոր դիրքին պատճառաւ: Ռազմազիտօրէն Հոռոմէացոց հնարաւորութիւն կուտար երկու կրակի մէջ առնելու իրենց պարթեւ թշնամին. բայց ասկէ քանի որ Վրկանները կը տիրէին պարթեւական ցամաքի վաճառականութեան ուղիներու վրայ, որու կը պարտէին Միջագետի կէս-յունական շահաստաններն իրենց ծագողումը, ա՛յս անտեսա-

կան ճնշման հզօր միջոց մըն էր Սելեւկիայի եւ Վաղարշակերտի իշխողներուն վրայ: Դէպի Բակտրիա եւ Հնդկաստան տանող ուղիներու սահմաններն հետ դաշնադրութեան մը վրայ միայն Հռոմի կատարեալ երաշխիք մը կու տար Պարթեւներու հետ կնքուած դաշինքին տեսականութեան (տես վերը Գլ. Ա, յոգ. 4):

Վրկանի Պարթեւներու ձեռքէն ելլելէն ետքը՝ բոլորովին ուրիշ հնարաւորութիւններ կը ներկայանային Հռոմի կառավարութեան. վասն զի Աղուանից երկրէն՝ Կասպից ծովու եւ Ոքսոսի վրայէն, որ Վրկանի հիւսիսային սահմանագետն էր, ջրոյ հին ճամբայ մը կը տանէր ամբողջ Ասիոյ վաճառքներու տուրեւառի բակտրիական կենդրոնները: Թէ այս ուղիով հնդկական արտադրութիւններ Պոնտոսի յունական քաղաքները կը հասնէին, այս Ներոնի ժամանակէն շատ առաջ ծանօթ է եւ բազմիցս յիշատակուած մատենագրութեան մէջ:

Ներոն Կասպից ծովու իր ձեռնարկութիւններու մէջ Սելեւկոս Նիկատորի հետքերուն վրայէն ընթացած է: Այս յունական արքունի տան Ասիոյ մեծագոյն իշխողը, իր որդւոյն՝ Անտիոքոսի դահակցութեան շրջանին՝ ուրեմն 285—282 տարիներուն, Պատրոկլէսի առաջնորդութեամբ արշաւախուժ մը առաքած է Կասպից ծովը խուզարկելու: Ծովակալը Կաւկասի շղթային հիւսիսային լեռնոտէն նաւարկած է ծովեզրն ի վեր մինչեւ այն վայրը, ուր կարծած է Կասպից ծովու հիւսիսային ուղիանոսին միացման տեղը հասած ըլլալ (Ստրբ. ԺԱ, 507, յջ. եւ Պլին. 2, 36):

Պատրոկլէսի մեկնակէտին որոշումը հին աշխարհագրութեան դժուարին խնդիրներէն մին է. ասոր լուսազոյն լուծումը յաջողած է տալ Հերման<sup>41</sup> մեկնակէտը Սելիտ-բուտի գետաբերանէն, ինչպէս կ'ենթադրուէր ցարդ, քանի մը կիլոմետր դէպի արեւմուտք փոխադրելով, հոն ուր ծովեզրը յանկարծ իր միջօրէականի ուղղութենէն արեւմտեան-արեւելք կը դառնայ: Այս կէտէն հաշուելով Պատրոկլէսի տուած թիւերն, ճշդիւ կը համաձայնին: Աղուաններու ծովեզրը կը հասնի մինչեւ Թերէք, Ոքսոսի գետաբերանը կը նոյնանայ Ուսրոյի հետ եւ Յաքսարատէսի գետաբերանը Կարա-բուզա ծովախորշը կը փո-

<sup>41</sup> Gött. Abh. ԺԵ, 4, 7 յջ., PWRE, Ժ, 2281, յոգ. Kaspisches Meer:

խաղաղութիւնը: Հերման յաջողած է միանգամայն ապացուցանել, թէ հին դարերուն Ուսբոյը դեռ ցամքած չէր, այլ թէ Ոքսոսի՝ ինչպէս կը կոչուէր այն տառնները Ամու-Դարիան, մէկ ճիւղը, Ուսբոյի անկողնէն Կասպից ծով կը թափուէր: Ասով Ոքսոսի Կասպից ծով հասնին եւ Աղուաններու երկրէն դէպի Բակտրիա գետուղին իրականութիւն կ'առնուն:

Հնդկական վաճառներու ճամբան եօթը օրէն Հինտիքուշի վրայէն նաւարկելի Ոքսոս կը բերէր, գետի վրայէն Կասպից ծով, ծովէն ասդին Կուրի գետաբերանը եւ անոր վրայէն՝ անցնելով Աղուաններու երկրէն՝ կը մտնէր Վրաստան, ու կիրճերը հինգ օրէն կտրելով Սարապանայի քով նաւարկելի Փասիսը, ուրեմն Պոնտոսի յունական երթեւեկի ցանցին կը հասնէր (Ստրբ. ԺԱ, 506): Պատրիկէս իր թագաւորին առաջարկած է նոյն խոկ ճամբուն վերջին մասն ալ ջրանցքի մը շինութեամբ նաւարկելի դարձնել եւ կ'ըսուի, թէ Սելեւկոս այդպիսի ծրագիր մը կը մշակէր, երբ Պտղոմէոս Կերաւնոսի մահաժողով պողովատիկին զոհ գնաց (Պլին. 2, 53): Այս վաճառքի ուղին սակայն, որու աշխարհամիջեան երթեւեկի համար ունեցած նշանակութեան ամէնէն առաջ Հերման ուշադիր եղած է (PWRE, 2290), միակը չէր, Հնդկաստանի եւ արեւմուտքի միջեւ կար դեռ աւելի հիւսիսային հաղորդակցութիւն մը: Պատրիկէս, իրմէ ետքը Պոմպէոսի հետախոյզներն անգամ մը եւս, տեղւոյն վրայ ստուգած են, անդրկասպեան նաւային երթեւեկ մը (Պլին. 2, 53): Կը տեսնենք ուրեմն, թէ Ներոն իր Կասպեան վաճառակաւանական ծրագիրները շինած է հին հիման մը վրայ եւ արդէն ծանօթ իրողութիւններ իր անտեսական-քաղաքական հայեցակէտին մէջ է առած:

Հոռոմէական վաճառականութեան փափագն էր հնդիկ եւ ներքին-ասիական վաճառականներու հետ հաղորդակցութիւնն անկախ ընել պարթեւ միջնորդութենէն եւ անմիջական կապ մը հաստատել անոնց հետ: Այս ծրագիրը իրականացի էր Ներոնի ժամանակ միայն, այդ միջոցին պարթեւ եւ Վրկան յարաբերութիւնները ծանրապէս պրկուած էին, իսկ այս պրկումը կրնար դէպի Բակտրիա հոռոմէական երթեւեկը պարթեւ ազդեցութենէն ազատ պահել: Ներոնի կտտավարութիւնը, որ ուրիշ վայրերու հետ հոռո-

մէական վաճառականութեան անկախութիւնը ձեռք բերած էր, կարող էր Վրկանի հետ դաշնադրութեամբ նոյնն ընել Բակտրիայի համար ալ:

Պարթեւներու վտանգուած դրացւոյն հետ դաշնադրութիւնը կրնար Վրկանի մէջ հիմ կազմել տեւական շահակցութեան, որ իր կարգին Հոռոմի վաճառականական ծրագիրներուն անհրաժեշտ ապահովութիւնը կ'երաշխաւորէր: Հնդկաստանի եւ Յիւստիայի մէջ պտղոմէան մեծ քաղաքականութեան հետեւողին՝ Ներոնի, որ իւր նոր լեզուին՝ յունական մեծ աւանդութեան վրայ գիտակցաբար յենլով Աղեքսանդրի փաղանդ յորջորջումն ընտրած էր, Կասպից ծովու սեւ լեւկեան ծրագիրներու վերաբերմը շատ լաւ կը պատշաճի: Բոլոր այս պատճառներն իրաւունք կու տան մեզի ներոնեան դէպի Կասպեան դռները եւ ծովը մտադրած արշաւին իմաստը որոնել այն երթեւեկային-քաղաքական ծրագիրներու մէջ, զորս պարզեցինք վերը:

Նոր ձեռնարկն անհրաժեշտօրէն երեք հանգրուան պիտի ունենար: Ի սկզբան հարկ էր ձեռնարկին պոնտական խարիսխն ապահովել. արդէն Հենտրըսըն (Ներոն, 223 յջ.)՝ պոնտական երկու հպատակ պետութիւններու բարձումը ուղիղ կերպով կաւկասեան ծրագիրներու հետ աղերսի մէջ կը դնէ: Պոնտական նորակազմ նահանգին կարելի էր անցնիլ մինչեւ Կասպից ծով երկրամասին դրաւումին: Վրաստան 56ին Կորբուզոնի քաղաքագիտական ջանքերու շնորհիւ արդէն պետութեան համար ապահովուած էր (Գլ. Ա, յօդ. 1): Միայն Աղուանից աշխարհը, այս Կուրի եւ Կասպից ծովու միջեւ տարածուած կարեւոր երկիրը, դեռ կարելի չէր եղած կրկին կցել Հոռոմի հետ (Անդ): Աղուանները կ'իսապայրի ժողովուրդ մըն էին, որոնց քաղաքակրթութենէ թափուր կեանքին կենդանի մէկ պատկերը պահած է մեզի Ստրաբոն, օգտուելով Թէոփանէս Մելիտինացւոյ դործէն (ԺԱ, 501 յջ.): Անոր տեղեկութիւններու քննութիւնը կը համոզէ զմեզ, թէ Հոռոմի կտտավարութիւնը, եթէ կ'ուզէր իր անդրկասպեան ծրագիրներն իրագործել, այս ժողովրդեան սանձը պէտք էր ձեռք անցնել:

Աղուաններն աւելի վաչկատուն էին քան Վրացիները եւ ասոր հետեւութեամբ՝ ըստ Ստրաբոնի, բարբարոսներու պատերազմա-

կան ամբողջ վայրենութիւնը պահած էին: Շատ գեղեցիկ եւ խոշորակազմ ցեղ մըն էին, բայց հոգուով պարզ եւ առանց բարձրագոյն քաղաքակրթութեան: Գետահովտի արգաւանդ երկիրն իրենց հօտերուն համար սքանչելի արօտավայրեր ունէր եւ առանց աշխատութեան, կամ շատ դոյզն վաստակի մը փոխարէն, երկու կամ երեք հունձք կու տար, եւ ասով բարձրագոյն քաղաքակրթութեան մը ամէն դրդիւ աւելորդ կը դառնար:

Աղուանները ինչպէս որ հողի առթական մշակումին համար միայն փայտեայ արօրով կը գոհանային, այսպէս ալ վաճառականութեան մէջ միայն փոխանակութիւնն ունէին: Դրամ, չափ ու կշիռ կա՛մ անծանօթ էին կա՛մ չունէին այն ճշդութիւնն, որ միջերկրեայց համար ինքնայայտ էր. անոնց թուական դրութեան մէջ կը պակէր հազարը: Երթեւեկի աննշանակ զարգացումը նպաստաւորած էր դաւառարարներու կարեւոր տարանջատումը, որ Պոմպէոսէ առաջ քանուկեց ինքնակայ պետութիւններու մէջ քաղաքական պառակտումի իր կրկնապատկերը կ'երեւցնէր<sup>42</sup>:

Միասնական պետութեան մը կազմութիւնը կ'երեւայ թէ հայ-վրական ազդեցութեան տակ յառաջ եկած է: Թագաւորէն ետքն ամենազղեցիկ մարդը քրմապետն էր, որ վրական սահմանին մօտ նուիրական գաւառի մը մէջ կը բնակէր: Այս գաւառը նուիրուած էր երկնքի մեծագոյն դից՝ Արամադուայ, արեգական դից՝ Միհրի եւ լուսնի դից՝ Անահիտի: Հոն պաշտուած աստուածներն, ինչպէս նաեւ ի պաշտօնէ ջուրմբերու մեծ բազմութիւնը՝ Հայաստանի եւ Կասպիցովկայի՝ իրանականին մերձեցող պաշտամունքը կը յիշեցնեն<sup>43</sup>: Տարուէ տարի քաւութեան համար մատուցուած մարդազոհը կը բնորոշէ այս ժողովրդեան բոլորովին նախնական բրտութիւնը:

Միայն զինուորական տեսակէտով Աղուանները, իրենց միութենէ յետոյ, ուշադրութեան արժանի դործօն մըն էին: Պոմպէոսի զէմ հանած էին 60.000 անձ հետեւակ եւ

12.000 ձիաւոր, ասոնց մէջ մեծ թիւ կը կազմէին իրանեան սպառազինութեամբ զրահաւորները<sup>44</sup>: Եթէ այս թուերէն կարեւոր զեղչ մ'ընենք ի հաշիւ հեղինակին երեւակայութեան, սակայն եւ այնպէս անոնց զինուորական նշանակութիւնը կ'երաշխաւորէ այն մեծ դերը, զոր անոնք տեւականօրէն ունեցած են հարաւէն իրենց դրացի երկիրներու կոխներուն մէջ: Անոնց մեծագոյն ոյժը կը կայանար, այն սերտ յարաբերութեան մէջ, զոր ունէին ազդակից սարմատական ցեղերու հետ, որոնք լեռներէն անդին կը բնակէին եւ միշտ սիրով օգնութեան կը փութային (Տակ. Տ. 2, 32 եւ ԺԱ, 9):

Աղուաններն ապահովաբար հիւսիսային սարմատական ժողովուրդ մըն էին, որ իր նոր դրացիներու ազդեցութեան տակ հետզհետէ իրանեան քաղաքակրթութեան երանդ մ'առաւ: Ներոնի ժամանակները զինուորական մեծ ուժով միասնական պետութիւն մը կը կազմէին, որ արեան զօրով կապուած էր հիւսիսի Սարմատներուն հետ: Հոռոմէացիներն այս պետութիւնը, որ Կասպից ծովու մուտքին կ'իջիէր, պէտք էին հպատակեցնել կամ ջնջել, եթէ կ'ուզէին այս ծովուն վրայ իրենց վաճառականութեան անարգել ճամբայ մը հարթել: Ուրեմն դէպի Վրկաններն եւ Բակտրիա ուղին կ'ընթանար աղուանեան մարտէն, որ ամբողջ ձեռնարկին երրորդ՝ զուտ անտեսական հանգրուանը պիտի հասցնէր ազատօրէն<sup>45</sup>:

4. Ներոնի պոնտական քաղաքականութիւնը:

Որմէ թերակղզին հնութեան մէջ տնտեսական եւ մշակոյթային փոխյարաբերութիւններով սերտիւ կցուած է Սեւ ծովու հարաւային եզերքի նաւահանգիստներու հետ: Այս հնօրեայ յարաբերութիւններն իրենց քաղաքական հետեւանքն ունեցան, երբ Պոնտոսի Միհրդատ Եւպատոր թագաւորը Բիթանիան, Պապլագոնիան, Կողքիսը եւ Բոսփորեան պետութիւնն իր հօրենական իշխանութեան հետ միացուց:

Պոմպէոս 64ին պոնտական այս մեծ տէրութիւնը Հոռոմի համար զբաւեց: Քաղաքա-

<sup>42</sup> Քաղաքական եւ լեզուական այս երեւոյթէն Տոմաշեկ այն տեսութեան յանդած է, թէ Աղուանը հաւաքական անունն է արեւելեան Կաւկասի ոչ-արեւական ժողովուրդներու:

<sup>43</sup> Հակառակամարտ միհրական կրօնի այս փոքր-ասիական մայրական պաշտամունքի մասին տես Cumont, Mon. myst. Mithr. I, 9 յջ. եւ 231 յջ.:

<sup>44</sup> Թէոփան առ Ստրբ.ի ԺԱ, 502. Պլուտ. Պոմպ., 34. Անտ., 34. Դիոն., 12, 54:

<sup>45</sup> Զինուորական պատրաստութիւններու մասին տես յաջորդ գլուխը:

չատ արեւմուտքը մինչեւ Ալիսէ անդին նոյն ատեն հոմէական նահանգի վերածուեցաւ, որ մինչեւ Մարկոս Աւրելիոսի ժամանակը ձերակոյտի վարչութեան տակ մնաց: Հիւսիսն ու արեւելքը նախ Միհրդատի որդւոյն՝ Փառնակի եւ ապա Պոլեմոնի գաղափարները իշխանութեան տակ հպատակ տէրութիւններ կազմեցին: Բոսփորեան պետութեան մէջ յետոյ դաս բարձրացած է հին պոնտական արքունի տան իգական գիծը, մինչ Պոնտոս եւ Կողքիս մինչեւ 63, երբ ասոնք հոմէական հողերուն կցուեցան, Պոլեմոնեան հարստութեան ձեռքն էին: Ներոնի կառավարութեան սկիզբը հոմէական երկրին այս հիւսիս-արեւելեան անկիւնն երկու հպատակ տէրութիւններ գոյութիւն ունէին: Բոսփորի մէջ կ'իջիւէր Կոսիս Ա., զոր 46ին Կղազիոս անոր երկնագոյն եղբոր՝ Միհրդատի դէմ թագաւորեցուցած էր. Պոնտոսի մէջ կը տիրէր 37էն ի վեր Պոլեմոն Բ.-ը՝ Կալիզուլա կայսեր երիտասարդութեան բարեկամը<sup>46</sup>:

Աւագոտոս արդէն համարած էր, թէ Սեւ ծովու եղերքները տարածուած այս պետութիւնն իր քաղաքակրթական դերը կատարած եւ հիւսիս-արեւելքի ժողովուրդները հոմի անմիջական ծիրին մէջ առնուելու հասուն դարձուցած էր: Իր կառավարութեան վերջին տասնամակիւն ծագած գերմանական եւ իլիրական դժուարութիւնները միայն արգելք եղած են Պոնտոսի կցման իր ծրագրերին ներուն կ'ուզեմ վերագրել պոնտական հին պետութեան գործերու համար կայսերական կենդրոնական-պաշտօնարանի մը կազմութիւնն, որու գոյութիւնը Կղազիոսէ մինչեւ Տրայանոս վերջերս Ռոստովցէֆ հետապնդած է (Ann., 15 յջ.):

Իբրեւ ժառանգ հին թագաւորներուն՝ կայսրը Բիւթանիայի եւ Պոնտոսի ձերակուտական նահանգներուն մէջ ունէր ընդարձակ արքունի հողեր, որոնք բնակուած էին ձեռական գիւղացիներէ (Rost. Stud., 283 յջ.): Արքունի այս կալուածներուն վրայ, որոնք պետութեան մէջ պետութիւն մը կը կազմէին, կար գործակալ մը, որ փոխհիւպատին կից բոլորովին անկախ գերք մը կը զբաղէր: Իր անունը դրամներու վրայ կ'ե-

<sup>46</sup> S. N. Բրանդիս PWRE, III, 779 յջ., 107. Bosphorus, 2:

րեւայ եւ աստիճանով առաջագահ գործակալներու կարգին կը պատկանէր: Այսու հանդերձ կարելի է նիթագրել, թէ այս պարագայիս, կայսերական եւ ձերակուտական կուսակալներու միջեւ փոխանակութիւն մը տեղի ունեցած ըլլայ. այլ իրարու կից կը պաշտօնավարէին երկուքը, եւ այս իր հիմնունէր արտաքին քաղաքականութեան մէջ: Բիւթանիայի գործակալը Բոսփորեան պետութեան եւ Հոմի կառավարութեան միջեւ միջնորդի դերը կը կատարէր:

Ուրեմն Բիւթանիայի եւ Պոնտոսի գործակալը, Միհրդատեան պետութեան մէջ կայսերական շահերու ներկայացուցիչն էր: Ծերակուտական նահանգներու արքունի կալուածները կը տնտեսէր, կը հսկէր Բոսփորեան հպատակ պետութեան դժուարին յարաբերութիւններու վրայ եւ հաւանական է, որ նոյն գիւրքն ունեցած ըլլայ նաեւ պոլեմոնեան պոնտական պետութեան հանդէպ, թէեւ այս մասին իր կարծատեւ գոյութեան չըջանէ մեզի ո եւ է տեղեկութիւն հասած չէ: Այս պաշտօնէն, առանց մեծ դժուարութեան, կրնար յառաջագայիլ մեծ-պոնտական նահանգին կայսերական կուսակալութիւնը: Կ'ենթադրեմ, թէ այս պաշտօնն արդէն Աւագոտոս հաստատած ըլլայ, թէեւ անոր գոյութիւնը Կղազիոսէ առդին միայն հետապնդողէ կարենանք:

Սեւ ծովու եղերքի երկու հպատակ տէրութիւնները, ինչպէս տեսանք, Ներոնի կառավարութեան սկիզբը դեռ գոյութիւն ունէին: Բայց 60ական թուականին մին արդէն բարձուած էր, իսկ միւսն իր անկախութեան մէջ մեծապէս սահմանաւորուած: Թէ Ներոն Պոլեմոնի պետութիւնը նահանգի վերածած է, այդ կ'աւանդուի պատմագիրներէ<sup>47</sup>: Այդ դէպքիս ժամանակը, հակառակ Յետրոպի անճիշտ տեղեկութեան, 63 տարին է, ինչպէ՞ կը ստուգուի նոյն երկրին երեք նշանաւոր քաղաքներու հոմէական թուականներէն: Ըստ այսմ պարթեական վերջին պատերազմի միջոցին ծովեզրն՝ Ալիսէ մինչեւ Կաւկաս, հոմէական նահանգ եղած էր:

Բոսփորեան անկախութեան սահմանափակումը սակայն, իր էական նշանակութիւնը կը ստանայ Պոնտոսի թագաւորութեան միաժամանակ նահանգի վերածուելովը: Առջեւ

<sup>47</sup> S. Nero, 18. Eutr. VII, 14. Aur. Vict. Ep. 5. h. Aug. v. Aurel., 21, 11:

նիս ունինք հոս Սեւ ծովու հպատակ պետութիւններու բարձման յորինուածական ձեռնարկ մը. պետութեան անմիջական սահմանը Պոնտոսի բովանդակ եզրներու վրայ կը տարածուի, իսկ անկախ միջնորդականութիւններն ամէնուրեք կը ջնջուին կամ թէ իրենց ինքնակացութիւնը կը ջղատուի: Արդէն Հենտրըսըն (Ներոն, 226 յջ.) այս կարեւոր ձեռնարկը կայսեր կասպեան ծրագրերնու հետ ճշգրէն աղբրի մէջ դրած է: Նոր նահանգին երկիրը կազմակերպական խարխիւր պիտի ըլլար կաւկասեան միջածովեան երկրին դէմ կատարուելիք գործողութեան:

Մեզի համար մասնաւորապէս շահազրուելու են այն կազմակերպական խնդիրները, որոնք ծագում առած են նահանգային դրութեան Սեւ ծովու հիւսիսային եւ արեւելեան եզրներու վրայ տարածուելուն հետեւութեամբ: Պոլեմոնի պետութեան երկիրը կուսակալի մը տակ միացուեցաւ Գաղատիայի հետ, որ արեւելեան լեզէոններու թէ՛ նորակոչներու հարուստ մթերանոցն էր եւ թէ՛ ձեր գորականներու հանգստարանը (Մարկուարտ, Ա. 202): Ասով գոյութիւն առաւ Հայաստանի եւ Վրաստանի սահմաններու վրայ զինուորական ուժեղ վարչական միութիւն մը: Հոմէական Փոքր Ասիայի ուղղական ծանրակէտը, որ պարթեական մարտի միջոցին Գաղատիոյ զանաւից Կապադովկիայի մէջ էր, այս կարգադրութեամբ դէպի հիւսիս արեւելք՝ դէպի Կաւկասեան աշխարհները փոխադրուեցաւ: Նորակազմ «Պոնտոս եւ Գաղատիա» նահանգը յայտնապէս նախատեսուած էր, կայսեր Կասպեան նոր քաղաքականութեան յենարանը դառնալու:

Աշխարհացոյցի վրայ ձգուած ակնարկ մը կը համոզէ զմեզ, թէ նորակազմ նահանգը միայն առժամանակեայ նկարագիր ունէր, անոր նեղ եւ երկարաձիգ մարմինն ընդլայնում եւ եղբրաւորում կը պահանջէր, եւ այս անոր համար կանխատեսուած ուղղականութեան քաղաքական դերին պէսպիսութեան համաձայն զանազան ուղղութեամբ կարելի էր իրականացնել: Վեսպասիանոս՝ բռնադատեալ՝ արեւելեան ամբողջ քաղաքականութիւնը պաշտպանողականի վերածեց, արեւելեան Փոքր Ասիայի մէջ Կապադովկիան եւ Փոքր Հայքն անոր կցելով՝ զինուորական գորաւոր սահման մը ստեղծած է Հայաստանի պետութեան դէմ (Մարկուարտ, անդ.) իսկ Ներոնի

յարձակողական հիւսիս արեւելեան քաղաքականութիւնը, բնական է որ պոնտական նահանգին եզրաւորումը բոլորովին այլ ուղղութեամբ որոնէր: Բոսփորեան պետութիւնը, որ 63ին անշուշտ կանխապէս պատրաստուած էր Հոմի կցուելու, դարձեալ Պոնտոսի հետ միացուելու էր, իսկ «Բիւթանիա եւ Պոնտոս» ձերակուտական նահանգին կայսերական վարչութեան տակ առնուելը, կրնար Փոքր Ասիայի մէջ նորակազմ նահանգին կարեւոր միջոցը զանդուածը տրամադրել: Ներոնեան հիւսիս-արեւելեան քաղաքականութեան առաջին ձգտումն էր, վերակենդանացնել միհրդատեան նախկին պետութիւնը՝ ստեղծելով մեծ-պոնտական նահանգ մը, որ իր մէջ փակէր՝ Թրակիայէն մինչեւ կիմմեբեան Բոսփորը՝ բոլոր հոմէական ծովեզրները:

Նորակազմ մեծ-պոնտական նահանգը յայտնապէս Աղուաններու երկրին զբաւումին մեկնակէտը պիտի կազմէր. 63 տարւոյն մէջ, յորում պարթեական մարտին վախճան կը նախադուշակուէր, նոր ձեռնարկին կազմակերպական հիմը դրուած է: Պարթեական խաղաղութեան կնքումէն ետքը, արեւելքի ընդհանուր կուսակալը՝ Կորբուլոն կրնար իր պատուիրակները ուղարկել նոր մարտադաշտը հետախուզելու,

(Շարունակելի:) Հ. Մ. ՀԱՊՈՉԵԱՆ



**ԵՐԵՄԻԱ ԶԵԼԷՊԻ ՔԵՐԵՄԻՐԺԵՆ**  
**ԿԵՆՆՔՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ**

(Շարունակութիւն եւ վերջ:)

38. Գանձեր եւ ողբեր:  
ա. Ողբ ասացեալ Երեմիայի ի մահն մահուտի Ամբակումի, որ էր Կ ամաց, ի քուին Ռձէ (1658):

Յաւուրս սրբոյ Հայաստանեայց աղէտին,  
Որ զսուրբն Յակոբ ձեռաց մերոց խլեցին...

Տուները կը կապեն ՅԵՐԵՄԻԱԷ ԲԱՆ ՈՂԲԻ:  
Ձեռ. Երուսաղէմ, Թ. 1042, 77 ր.—79 ր.:  
Հրատ. Թորգոմեան, էջ 745—748: